

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-ԻՆ ԺԱՄԸ 17:00-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ՝ ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր (համաձայնությամբ)
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ա. Սամուելյան	ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ջ. Բաղդասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Լ. Մուրադյան	ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ
Է. Հայրիյան	ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատի դատավոր
Ա. Թովուզյան	Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ
Ջ. Հասրաթյան	«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ռ. Ծառուկյան	«Գ. Կ. Ծառուկյան» ՍՊԸ-ի տնօրեն
Յ. Գևորգյան	Վաճառականների միության նախագահ
Գ. Արմաղանովա	Առողջապահության աշխատողների արհմիությունների հանրապետական կոմիտեի նախագահ

Ս. Ասլանյան	Մայրության ֆոնդի նախագահ
Վ. Գասպարյան	ՀՀ Շիրակի մարզի Ախուրիկ համայնքի ղեկավար
Ա. Մնացականյան	ՀՕՄ-ի Երևանի գրասենյակի տնօրեն
Ծ. Հարությունյան	ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակի գենդերային ծրագրերի պատասխանատու
Գ. Հայրապետյան	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ
Ա. Խուրդյան	«Հրապարակում» հեռուստատեսային ծրագրի ղեկավար
<i>Հրավիրվածներ`</i>	
Ա. Բակունց	ՄԱԶԾ-ի ծրագրերի ղեկավար
Վ. Կարապետյան	ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրեն
Լ. Զեյնալյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության փորձագետ

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ողջույնի խոսքը

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Կանանց խորհրդի անդամներին ու հրավիրված կանանց ՀՀ կառավարության անունից շնորհավորեց Կանանց միջազգային տոնի կապակցությամբ:

1. «Լավագույն կին-գործարար» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության կազմակերպման մասին

(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանը և նշեց, որ աշխատանքային խմբի կողմից մշակվել են «Լավագույն կին-գործարար» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության հետ կապված մոտեցումները: Այդ կապակցությամբ առաջարկեց`

1) սահմանել մրցանակաբաշխության 4 անվանակարգ`

ա. «Լավագույն կին-գործատու», որը կվերաբերի այն կին-գործարարներին, ովքեր կունենան նվազագույնը 30 տոկոս սեփականության իրավունք կամ կոնկրետ ձեռնարկությունում կգրադվի կառավարմամբ,

բ. «Լավագույն կին-նախաձեռնող»,

գ. «Մարզի կին-բարեգործ»,

դ. «Կին-արտադրողի լավագույն ապրանքանիշ».

2) մրցույթի սկիզբը հայտարարել 2012 թվականի մարտի 12-ին, իսկ արդյունքներն ամփոփել 2012 թվականի մարտի 25-ին: Հայտարարությունը կտեղադրվի ՓՄՁ ԶԱԿ-ի պաշտոնական կայք-էջում, ինչպես նաև կհայտարարվի հեռուստատեսությամբ:

3) մրցանակաբաշխության արարողությունն անցկացնել 2012 թվականի ապրիլի 5-ին:

4) յուրաքանչյուր անվանակարգում սահմանել 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր: Ընդ որում, 1-ին տեղն զբաղեցնողին կտրվի ՀՀ վարչապետի ծիրանագույն պատվոգիր, 2-րդ տեղն զբաղեցնողին՝ կապույտ գույնի պատվոգիր, 3-րդ տեղն զբաղեցնողին՝ կարմիր գույնի պատվոգիր: Հաղթող կանանց հետ ԶԼՄ-ների կողմից կվարվեն հարցազրույցներ, մասնավորապես, «ՓՄՁ լրատու» հաղորդաշարով կլուսաբանվեն նրանց բիզնես-գործունեությունները: Այդ կապակցությամբ առաջարկվում է պատրաստել ռեպորտաժ նաև «Հրապարակում» հեռուստատեսային ծրագրով: Դրանից բացի՝ տվյալ կանանց (անհրաժեշտության դեպքում) կմատուցվեն անվճար խորհրդատվական ծառայություններ՝ ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից:

ՀՀ ԱԺ-ի պատգամավոր Հ. Նաղդայանն առաջարկեց որպեսզի մրցույթի մասին հայտարարությունը հեռարձակվի նաև մարզային հեռուստատեսություններով:

ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանը տեղեկացրեց, որ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը ևս հայտնել է իր պատրաստակամությունը՝ մրցույթի մասին հանրությանն իրազեկելու գործում:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ «Լավագույն կին-գործարար» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության կազմակերպման առաջարկին:

2) մրցույթի սկիզբը հայտարարել 2012 թվականի մարտի 12-ին, իսկ արդյունքներն ամփոփել 2012 թվականի մարտի 25-ին:

3) ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանին՝ համագործակցելով շահագրգիռ կառույցների հետ՝ ապահովել անցկացվելիք մրցույթի մասին հանրությանը պատշաճ մակարդակով իրազեկումը:

2. «Լավագույն համայնքայեա՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ»
ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության կազմակերպման մասին

(Վ. Տերտերյան, Տ. Մարգարյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը և առաջարկեց՝

1) սահմանել ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության 2 անվանակարգ՝ «Լավագույն քաղաքայեա՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» և «Լավագույն գյուղայեա՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ»: Ընդ որում, տվյալ մրցանակաբաշխության ժամանակ Երևան քաղաքը որպես համայնք չի ներառվի:

2) ձևավորել մրցութային հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը: Մրցութային հանձնաժողովի կողմից համայնքների ընտրությունը կկատարվի որոշակի ցուցանիշների (ղեկավար կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը, համայնքային զարգացման ծրագրերում գենդերային ծրագրերի թիվը և այլն) հիման վրա:

3) մինչև 2012 թվականի մարտի 15-ը համապատասխան կայք-էջում կտեղադրվեն յուրաքանչյուր անվանակարգի գծով ընտրված լավագույն 10 համայնքների ցանկերը, որոնց կկցվեն այն հիմնավորումները և նկարագրությունները, որոնց հիման վրա կատարվել է ընտրությունը: Դրանից հետո կկազմակերպվեն խորհրդակցություններ՝ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ և արդյունքում՝ մինչև 2012 թվականի ապրիլի 2-ը, կընտրվեն 3-ական քաղաքային ու գյուղական համայնքներ ու դրանք կներկայացվեն ՀՀ կառավարության աշխատակազմ: Ընդ որում, ընտրության գործընթացում չեն բացառվի նաև լրացուցիչ՝ անուղղակի, ցուցանիշների դիտարկումը, որոնք էականորեն կփոխեն կոնկրետ համայնքի նկարագիրը:

4) յուրաքանչյուր անվանակարգում սահմանել 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր՝ համապատասխան գույնի (ծիրանագույն, կապույտ և կարմիր) պատվոգրերով: Շնորհվելիք պատվոգրերի թիվը կկազմի 12:

Ինչ վերաբերում է հանրության իրազեկմանը, ապա այն կիրականացվի ինչպես համացանցի, այնպես էլ, ՀԿ-ների, թերթերի, մարզպետարանների ու ՋԼՄ-ների միջոցով:

ՀՀ ԱԾ-ի պատգամավոր Հ. Նադդայանն առաջարկեց որպեսզի հաջորդ փուլում հայտարարել «Լավագույն պետական կին-ղեկավար» կամ «Լավագույն համայնքային կին-ղեկավար» անվանակարգը:

ՄԱԶԾ-ի ծրագրերի ղեկավար Ա. Բակունցն առաջարկեց՝

1) որպեսզի մրցանակաբաշխության արդյունքում մրցանակ ստացած կանանց համար կոնկրետ մարզում և համայնքում կազմակերպվեն համապատասխան միջոցառումներ՝ տվյալ համայնքի բնակիչներին իրազեկելու համար.

2) մրցանակաբաշխության արդյունքում մրցանակ ստացած համայնքների համար սահմանել որոշակի արտոնություններ (օրինակ՝ բյուջեների կազմման գործընթացում):

«Համալսարանական կրթությամբ կանանց ստոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասրաթյանն առաջարկեց որպեսզի Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի համար հայտարարվի առանձին մրցույթ «Լավագույն դպրոց՝ գենդերային կրթության ուղղությամբ» անվանակարգով.

2) համապատասխան միջազգային կառույցների օժանդակությամբ հրատարակել Գենդերային քաղաքականության հայեցակարգը և այն տարածել հանրապետության բոլոր համայնքներով:

ՀՕՄ-ի Երևանի գրասենյակի տնօրեն Ա. Մնացականյանն առաջարկեց Կանանց խորհրդի կազմում ընդգրկել նաև Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կին ներկայացուցչին՝ ապահովելու համար միջոցառումների հեռուստատեսությամբ պատշաճ լուսաբանումը:

Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ Ա. Թովուզյանն առաջարկեց վերանայել ՀՀ քաղաքացիական ծառայողների ուսուցման ծրագրերը (դրանց համար նախատեսված է 40 ժամ) և քննարկել դրանց արդյունավետությունը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ «Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության կազմակերպման առաջարկին.

2) առաջարկել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ Մ. Բաղայանին ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտեյանի և Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ Ա. Թովուզյանի հետ համատեղ քննարկել ՀՀ քաղաքացիական և համայնքային ծառայողների ուսուցման ծրագրերի վերանայման հնարավորության հարցերը և արդյունքները զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

3. Մրցութային 2 հանձնաժողովների կազմերի քննարկում և հաստատում

(Ա. Միրզախանյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանը և առաջարկեց հաստատել «Լավագույն կին-գործարար» և «Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» մրցութային հանձնաժողովների անհատական կազմերը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Լավագույն կին-գործարար» և «Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» մրցութային հանձնաժողովների անհատական կազմերը:

4. Այլ կազմակերպական խնդիրներ՝ մրցանակաբաշխության հետ կապված

Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ՝

1) ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գ. Հայրապետյանը տեղեկացրեց, որ կազմակերպվել է հանդիպում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցչի հետ, որի ընթացքում քննարկվել է գենդերային բնագավառում մրցանակային անվանակարգերի սահմանման գծով համագործակցության հնարավորության հարցը: Այդ առումով ձեռք են բերվել որոշակի համաձայնություններ, որոնց վերջնական ճշգրտումներից հետո կներկայացվեն համապատասխան գործողությունների ծրագիր:

2) ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակի գենդերային ծրագրերի պատասխանատու Ծ. Հարությունյանը տեղեկացրեց, որ իրենց կազմակերպությունն առավել հետաքրքրված է «Լավագույն կին-գործարար» մրցանակաբաշխության գործընթացով, քանի որ ԵԱՀԿ-ի առաջնություններից է հանդիսացել կանանց գործարար հմտությունների զարգացումը մարզերում: Այդ կապակցությամբ «Լավագույն կին-նախաձեռնող» անվանակարգի 3 հաղթողներին կտրամադրվի աջակցություն (ըստ անհրաժեշտության)՝ ուսուցողական այցերի կազմակերպման, նոր կապերի հաստատման, փորձի փոխանակման գծով և այլն: Ընդ որում, տվյալ առաջարկը և ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակի վերջին

տարիների գործողությունների պլանը գրավոր ներկայացվել է նաև ՀՀ կառավարության աշխատակազմ.

3) ՄԱԶԾ-ի ծրագրերի ղեկավար Ա. Բակունցը տեղեկացրեց, որ մինչև 2012 թվականի մարտ ամսվա վերջը համաձայնություն ձեռք կբերվի Եվրամիության ֆինանսավորմամբ ՄԱԶԾ ծրագիրը՝ ՏԻՄ-երում կանանց մասնակցությունը բարձրացնելու ուղղությամբ: Ծրագրի հիմնական նպատակը ՏԻՄ-ում կանանց դերի բարձրացումն է, ինչպես նաև համայնքային մակարդակում ընտրված կանանց հետ համագործակցումն է: Այնուհետև կազմակերպվելիք մրցանակաբաշխության գծով առաջարկեց սահմանել նաև անվանակարգ երիտասարդ կանանց համար.

4) «Համալսարանական կրթությամբ կանանց առցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասարայանը նշեց, որ միջազգային մակարդակով Հայաստանի ցուցանիշը գյուղական համայնքներում գենդերային ներգրավվածության գծով բավականին ցածր է (6.2 տոկոս).

5) ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանը, ՄԱԶԾ-ի ծրագրերի ղեկավար Ա. Բակունցի առաջարկի վերաբերյալ տեղեկացրեց, որ ՀՀ վարչապետին կից Հայաստանի երիտասարդական հիմնադրամը համագործակցում է մի շարք ՀԿ-ներ հետ: Ուստի առաջարկեց, որպեսզի երիտասարդ կանանց գծով սահմանվելիք անվանակարգը սահմանվի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին՝ ՄԱԶԾ-ի ծրագրերի ղեկավար Ա. Բակունցի առաջարկության հիման վրա կազմակերպել ու անցկացնել միջանակաբաշխություն՝ երիտասարդ կանանց համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳԱՅԱՆ